



Հրազդանի Օրհուս կենտրոնն առաջարկներ է ներկայացրել քաղաքապետարան

Նոյեմբեր ամսվա գործունեություն

✿ Թունաքիմիկատների պահեստարանի կառուցման հարցը մնում է հրատապ

Նոյեմբեր ամսին Հրազդանի Օրհուս կենտրոնը շարունակել է իր աշխատանքային գործունեության կիզակետում պահել թունաքիմիկատների պահեստարանի կառուցման հետ կապված խնդիրը՝ որպես հրատապ:

Հարցի առնչությամբ **նոյեմբերի 5-ին** Հրազդանում կազմակերպվել է քննարկում, որին մասնակցում էին բնապահպան-փորձագետներ, իրավաբաններ, ՀԿ սեկտորի ներկայացուցիչներ, Հրազդանի քաղաքապետի օգնականը, ավագանու անդամներ, տեղի բնակիչներ և Հրազդանի Օրհուս կենտրոնի համակարգողները: Քննարկումը լուսաբանվել է հեռուստաընկերություններով: Քննարկման ընթացքում ներկայացվել է խնդրի էությունը, ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա: Հրազդան համայնքի ղեկավարի օգնական Ա. Գաբրիելյանը հավաստիացրեց, որ համայնքի ղեկավարը տեղյակ չէ խնդրից և Օրհուս կենտրոնի տրամադրած տեղեկատվության հիման վրա արդեն իսկ ունի իր բացասական դիրքորոշումը:



✿ Առաջարկություններ ուղղված 2017-2021թթ համայնքի հնգամյա զարգացման ծրագրին

Նոյեմբերի 29 - ին Հրազդանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցում էին Կոտայքի մարզպետարանի, Հրազդանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետերը, ներկայացուցիչները, Փորձագետների խորհրդի անդամներ՝ նախագահի գլխավորությամբ: Քննարկման նպատակը՝ ներկայացնել կենտրոնի կողմից կազմված Հրազդանի հնգամյա զարգացման ծրագրի և Կոտայքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հետ կապված առաջարկությունները՝ ուղղված համապատասխանաբար Հրազդանի քաղաքապետարանին և Կոտայքի մարզպետարանին: Բոլոր առաջարկությունները հավանության արժանացան մասնակիցների կողմից:

Նոյեմբերի 30 – ին Հրազդանի քաղաքապետարանում տեղի ունեցավ ավագանու առաջին նիստը, որին մասնակցեց նաև Հրազդանի Օրհուս կենտրոնի համակարգող Ա. Մնացականյանը: Նա ներկայացրեց առաջարկներ՝ քաղաքի հնգամյա զարգացման ծրագրի բնապահպանական մասում ներառելու համար:



Քաղաքի զարգացման ծրագիրն իրենից ներկայացնում է քաղաքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ քաղաքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում:

Հիմնվելով քաղաքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագրի բնապահպանական մասի վրա, այն է՝ կազմակերպել Հրազդան գետի հունի մաքրման, ինչպես նաև սելավատարների մաքրման և վերականգնման աշխատանքներ, կանաչ գոտիների ընդլայնման և վերականգնման աշխատանքներ /ծառեր, թփեր, գազոններ/ և ոռոգման համակարգի նոր ջրագծերի անցկացման աշխատանքներ, Հրազդանի Օրհուս կենտրոնը նոր առաջարկներ է ներկայացրել Հրազդանի քաղաքապետարան՝ 2017-2020թթ. քառամյա զարգացման ծրագրի բնապահպանական մասը որոշակիորեն ապահովելու նպատակով:

- **Նախորդ զեկույցում արդեն նշել ենք, որ** քաղաքն ունի մաքրման կայանի խնդիր: Հրազդան քաղաքի **կեղտաջրերը** խորհրդային տարիներին մաքրվում էին Քաղսիի կեղտաջրերի մաքրման կայանում, որը շուրջ 25 տարի չի գործում: Կոյուղատարների մաշվածության պատճառով առաջանում են բազմաթիվ վթարներ, որի արդյունքում կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերը լցվում են Հրազդան գետը:

Ավելացնեմ, որ Հրազդան քաղաքը բացասական ազդեցություն ունի Հրազդան գետի ջրի որակի վրա: Քաղաքի կոյուղու համակարգից Հրազդան գետ լցվող կեղտաջրերը հիմնականում պարունակում են նիտրիտներ, նիտրատներ, ամոնիումի իոններ և կախված նյութեր:

Վերջին շրջանում փորձագետների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հրազդանի տարածաշրջանում կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայանի կառուցման համար անհրաժեշտ կլինի շուրջ 10.0 մլն ԱՄՆ դոլար գումար, որի հետ մեկտեղ կարող են վերականգնվել նաև նախկին մաքրման կայանի կենսաբանական մաքրման տանկերները:

Քանի որ գումարը խոշոր է, հավանականությունը փոքրանում է կայանը վերակառուցել, ուստի

Հրազդանի Օրհուս կենտրոնը առաջարկում է

- ✓ Լոկալ մաքրման կայաններ տեղադրել բոլոր ձեռնարկություններում
- ✓ Հետևողականություն ցուցաբերել “Հրազդան ՋԷԿ”-ից և “Հրազդան- 5” – ից առանց մաքրման բաց թողնված արտադրական կեղտաջրերի հոսքին դեպի Մարմարիկ գետ

- Հրազդան գետի վտակ հանդիսացող Մարմարիկը հայտնի է սելավներով: Քանի որ Հրազդան գետի հետ միացման հատվածում գետահովտի թեքությունը մեծ չէ, ջուրը մեծ տարածքներ ծածկելով զգալի վնասներ է հասցնում:

Կենտրոնն առաջարկում է.

- ✓ Դեռևս խորհրդային տարիներին ամրացված հենաձածկերի վերականգնում
- ✓ Անտառատնկումներ, որը կպաշտպանի քաղաքը ջրհեղեղներից և սելավաստեղծ գործընթացներից

- ***Ինչպես նաև առաջարկությունների փաթեթում ընդգրկել.***

- ✓ Քաղաքի կանաչապատման ծրագրերի իրականացում,
- ✓ Քաղաքի օդային ավազանի էկոլոգիական մոնիթորինգի ընդլայնում, որը կընդգրկի ձեռնարկություններին: Մասնավորապես Ցեմենտի գործարանի կրկին գործարկման դեպքում կնկատվի օդային ավազանի աղտոտման լուրջ վտանգ, քանի որ գործարանի ֆիլտրերը չեն աշխատում:
- ✓ Ուշադրության կենտրոնում պահել Հրագրանի երկաթահանքի հնարավոր շահագործման խնդիրը, ի դեպ, որի համար քաղաքապետարանը հողահատկացում չի արել
- ✓ Անկախ փորձագետի մասնակցություն էկոլոգիական փորձաքննություններում՝ կապված հանքավայրերի շահագործման հետ
- ✓ Բնապահպանական որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության ապահովում
- ✓ Հետևողականություն թունաքիմիկատների պահեստարանի հնարավոր կառուցման նախագծման, նախագծի կազմման բոլոր փուլերում հասարակության մասնակցության ապահովման աշխատանքներին
- ✓ Սերտ համագործակցություն ՀԿ սեկտորի և Օրհուս կենտրոնի հետ

Անահիտ Մնացականյան

Հրագրանի Օրհուս կենտրոնի համակարգող